

## ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ. ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒՄՈՒԹՅՈՒՆ

Գ. Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ֆրանսիայի թագավոր Ֆրանցիսկ I-ի օրոք՝ 1537 թ. հիմնադրվեց թագավորական գրադարանը: 1789 թ. այն հայտարարվեց «Ազգային»: Ֆրանսիայի «Ազգային գրադարանի» (այսուհետև՝ ԱԳ) խնդիրն էր պահպանել և մատենագրել Ֆրանսիայի տպագիր բոլոր հրատարակությունների պարտադիր օրինակները: Իսկ «ազգային» բառը արեմտանվորական լեզուններում հավասարաթեք է «ազգային», «ժողովրդական», «հայրենական», «պետական» հասկացություններին: Խորհրդային Միությունում ազգերի իրավահավասարության հիմքի վրա ստեղծվեց Վ. Ի. Լենինի անվան գրադարանը, որի նպատակն էր իրականացնել համակողմանի (ունիվերսալ) գրադարանի ֆունկցիա: Համամիութենական կենտրոնի գիտամեթոդական և գիտահետազոտական աշխատանքներ՝ գրադարանագիտության, մատենագիտության և գրքագիտության բնագավառներում: Բոլոր գրադարանների համար, անկախ պատկանելությունից, այն համամիութենական գիտամեթոդական, հանձնարարական մատենագիտության և միջազգային աբոնեմենտի գլխավոր կենտրոնն է:

Սակայն մինչև օրս գրադարանագիտության մեջ չկա միասնական կարծիք այն մասին, թե գրադարաններն ինչպիսի հատկանիշներով պետք է կոչվեն ազգային: Այս առումով հիշատակելի է անգլիացի գրադարանագետ Լ. Հարրոդի «Գլոսսարի գրադարանավարը» ուսումնասիրությունը, որտեղ տրվել է ԱԳ-ի հետևյալ սահմանումը. «Դա գրադարան է՝ պետության կողմից ապահովված, որն ամբողջությամբ ծառայում է տվյալ ազգին: Սովորաբար այդպիսի գրադարաններից գիրք դուրս չի տրվում, և ղրանց ֆունկցիան էր ապագա սերունդների համար հավաքել և ապահովել երկրում հրատարակված գիրք և պարբերական մամուլը»<sup>1</sup>: Այս սահմանումը գրված է 1934 թ. Բրիտանական թանգարանի աշխատակից Ա. Էսդեյլի իրականացրած և հրատարակած «Աշխարհի ազգային գրադարաններ» տեղեկատուի հիման վրա, որտեղ հավաքված էր քսանմեկ երկրների խոշորագույն գրադարանների մասին ինֆորմացիա<sup>2</sup>: Փաստագրական հարուստ նյութերի շնորհիվ Ա. Էսդեյլի գիրքը համարվեց ժամանակի դասական նվաճումներից մեկը, իսկ Լ. Հարրոդի ձևավակերպած սահմանումը մոռացության էր տրվել, քանզի այն բավական ճիշտ արտացոլումն էր իր ժամանակի ԱԳ-ի:

ԱԳ-ի շուրջ միասնական հայացքների բացակայություն է դրսևորվել 1958 թ. Վիեննայում կայացած եվրոպական երկրների միջազգային գիտատժողովում, որտեղ գիտատժողովի նախագահ Պ. Բուրժուան ասել է. «Մինչև այսօր չգիտեմ, թե ինչն է իրականը ազգային գրադարանի մեջ. որպեսզի, թե՞ ֆունկցիաները, որպեսզի իրավունք ունենանք անվանել «ազգային»<sup>3</sup>:

Հետագայում՝ 1970-ական թվականներին, ամփոփելով Վիեննայի գիտատժողովի մասնակիցների կարծիքները, անգլիացի գրադարանագետ Գ. Բարստոնը տվեց ԱԳ-ի ավելի լայն մեկնաբանումներ, որպես ազգային

<sup>1</sup> Руководящие материалы по библиотечному делу. Справочник, под ред. В. С. Лесохин, М., 1988, с. 14.

<sup>2</sup> L. M. Harrod, The Librarian's glossary, London, 1938, p. 105.

<sup>3</sup> A. Esdalle, National libraries of the world, London, p. 386.

<sup>4</sup> P. Bourgeois, Foreword National libraries. Their problems and prospects, Paris, 1960.

մշակույթի կենտրոնի, որն ունի ռեզիդենսը նշանակություն, և որպես երկ-  
ֆունկցիոնալ ԱԳ-ի<sup>5</sup>, Գ. Բարստոնի կարծիքին էր հարում և անգլիացի մեկ  
այլ գրադարանագետ Մ. Լայնը, ըստ որի ԱԳ-ն ունի համակողմանի և ռե-  
զիդենսի դեր<sup>6</sup>:

Տարակարծություններն այլ էին Վիեննայի գիտաժողովի մասնակիցներ,  
բրիտանական թանգարանի տնօրեն Ֆ. Ֆրենսիսի և բելգիացի գրադարանա-  
գետ Գ. Լիբերտի միջև: Եթե առաջինը նշում էր, որ ԱԳ-ը ժառանգում է երկրի  
գրքային ամբողջ արտադրանքի հավաքագրմանն ու պահպանմանը<sup>7</sup>, ապա  
երկրորդը հաստատում էր, որ ԱԳ-ը բնութագրող հիմնական գիծը, անկաս-  
կած, նրա առաջնակարգ դերն է երկրի մյուս գրադարանների շարքում<sup>8</sup>:

Կրթության, գիտության և մշակույթի հարցերի գծով ՄԱԿ-ի (Յունեսկո)  
1970 թ. 16-րդ նստաշրջանում, որտեղ քննարկվել է գրադարանների դասա-  
կարգման հարցը, նույնպես նշվել է ԱԳ-ի առաջնակարգ հատկանիշի մա-  
սին<sup>9</sup>: Իսկ 1980-ական թվականներին գերմանացի գրադարանագետ Խ. Կուն-  
ցեն ԱԳ-ին վերագրեց աղղային տպագիր արտադրանքի հավաքագրման ու  
մատենագիտական ցուցակագրման հատկանիշները<sup>10</sup>:

Այսպիսով, գոյություն ունեն ԱԳ-ի վերաբերյալ տարբեր մեկնաբա-  
նումներ՝ պարզելու և հիմնավորելու նրա տեղն ու դերը տարբեր երկրների  
մշակույթի պատմության մեջ:

Այժմ անդրադառնանք հայոց ԱԳ-ին: Ըստ Հայաստանի նախարարների  
խորհրդի 1990 թ. հուլիսի 23-ի որոշման, որով Ա. Մյասնիկյանի անվան  
հանրային գրադարանն անվանվել է ԱԳ, ճիշտ կլինի՝ ասել, թե հայոց ԱԳ-ի  
ծնունդը սկսվում է այդ թվականով, եթե այո, ապա գրական ո՞ր ֆունդի հի-  
ման վրա:

Եթե ֆրանսիական ԱԳ-ի ծնունդը կապված էր 1789 թ. բուրժուական հե-  
ղափոխության հաղթանակի հետ, որը նոր երևույթ էր Եվրոպայի պատմու-  
թյան մեջ, ապա, մեր կարծիքով, նույնը չի կարելի ասել ներկայիս հայոց  
ԱԳ-ի մասին՝ այն կապելով խորհրդային Միությունում տեղի ունեցող սո-  
ցիալ-քաղաքական վերափոխումների, այդ թվում՝ հայ ազգային շարժում-  
ների հետ: Ինչո՞ւ: Որովհետև ժամանակագրության հարցում գլխավորը ոչ թե  
անվանափոխումն է, այլ գրքային ֆունդի ձևավորումը, որի ստեղծման պատ-  
մությունը, անցնելով մոտ երկդարյա ճանապարհ<sup>11</sup>, կապ չունի 1990-ի հետ:

Ընդհանրապես, դժվար է հաշտվել այն մտքի հետ, թե հայոց ԱԳ ասե-  
լով անպայման պետք է նկատի ունենալ վերոհիշյալ գրադարանը, որի հիմ-  
նական ֆունկցիաներից մեկն էլ առ այսօր ոչ միայն հայալեզու, այլև օտա-  
րալեզու տպագիր հրատարակությունների ֆոնդավորումն ու մատենագիտա-  
կան սպասարկումն է: Մի՞թե Վենետիկի, Վիեննայի և Երևանի Մաշտոցի ան-  
վան Մատենադարաններն, ազգային չեն: Խոսքն ընդհանրապես հայոց ազ-  
գային Մատենադարանի կամ գրադարանի մասին է: Եթե գրադարանի և մա-

<sup>5</sup> G. Burston, National libraries. An analysis. Int. libr. rev.—1973—Vol. N 2-P, 183—194.

<sup>6</sup> M. B. Line, Introduction National libraries. Ed. by M. B. Line, London, 1979. P. 2—3.

<sup>7</sup> F. C. Francis, The organization of National libraries. Their problems and prospects, Paris, 1960, P. 21.

<sup>8</sup> H. Liebaers, The needs of National libraries as regards professional training National libraries; Their problems and prospects, Paris, 1960, p. 27.

<sup>9</sup> Recommendation concerning the international Standardization of library statistics adopted by the General Conference at its sixteenth session, Paris, 13 November 1970.—Paris; UNESCO. A. 19p.

<sup>10</sup> X. Кунце, Избранное, М., 1983, с. 155.

<sup>11</sup> Մ. Բիրաբյան, Մա.ր գրադարանի 150 տարին (Սովետական Հայաստան, 26. I. 1983)։

տենագրարանի միջև իմաստային նշանակությունն այնքան էլ տարբեր չէ, որ տեղից էլ՝ «ազգային մատենադարան», «ազգային գրադարան» և «ազգային մատենագիտություն» հասկացությունները, ապա դժվար չէ նկատել, որ հայոց ազգային մատենադարանի (գրադարանի) պատմությունը գնում է դարերի խորքը: Եվ չնայած դրանց պատմությանը տարբեր առիթներով անդրադարձել են Գ. Հովսեփյանը<sup>12</sup>, Ռ. Իշխանյանը<sup>13</sup>, Մ. Հացունին<sup>14</sup>, Վ. Ղազարյանը<sup>15</sup> և ուրիշներ, ցավոք, պետք է նշել որ այսօր շուրջ հայկական մատենադարանների ու գրադարանների լիարժեք պատմությունը, որի լուսաբանումն անշափ կարևոր է:

Այնուհանդերձ, հայոց ազգային առաջին Մատենադարանը ստեղծվել է V դարում՝ Հայաստանի մայրաքաղաք Վազարշապատում (էջմիածնում), որի պատմությունը ձգվում է մինչև մեր օրերը: Արժանի են հիշատակման նաև Տաթևի (IX դ.); Սանահինի ու Հաղպատի (X դ.), Գեղարդի կամ Այրիվանքի (XII դ.), Գլաձորի և Սաղմոսավանքի (XIII դ.), ինչպես նաև Կիլիկիայի (Հռոմկլա, Սիս, Դրազարկ, Սկևռա—XIII դ.) ազգային գրադարաններն ու մատենադարանները: Հայոց հոգևոր մշակույթի հին, միջնադարյան և նոր կենտրոններում հավաքագրվել ու մատենագրվել են հազարավոր ձեռագիր ու տպագիր գրքեր, նաև այլ փաստաթղթեր, որոնք պատմական տարբեր ժամանակներում ծառայել ու ծառայում են հասարակական տարբեր խմբերի ու խավերի հոգևոր պահանջմունքների բավարարմանը: Ահա թե Մատենադարանի մասին ինչ է գրում Գ. Հովսեփյանը. «Մատենադարանը մարդկային մտքի և քաղաքակրթության զարգացման լավագույն հայտարարն է. անցյալ սերունդների ստեղծագործող մտքի պահպանության և տարածման կարևորագույն հաստատությունը: Առանց Մատենադարանների գոյության՝ մտքի և քաղաքակրթության զարգացում և սերունդներից-սերունդ ավանդելու և տարածելու միջոց չկա լայն չափերով»<sup>16</sup>: Ուշագրավ է նաև բուլղարացի գրադարանագետ Կ. Կալաջիևայի խոսքը ԱԳ-ի մասին. «Ազգային գրադարանը, որպես ինստիտուտ, հիմնադրվեց այն ժամանակ, երբ բուրժուադեմոկրատական հեղափոխությունը փշրեց ֆեոդալական հասարակության ձևերը, և ազգը, գիտակցելով իր միասնականությունն ու հզորությունը, ձգտեց հավաքել իր անցյալի և ապագայի գրավոր հուշարձանները»<sup>17</sup>:

Կարելի է եզրակացնել, որ դարերի մեջ իր պետականությունն ու քաղաքական ղեկը կորցրած հայ ժողովրդի ԱԳ-ի, որպես պատմամշակութային հաստատության, ծնունդը, փաստորեն, կապված է վաղ հնադարի հետ, որն իր սոցիալական ծագմամբ հայկական եկեղեցու հովանու տակ ձևավորված ազգային ինքնագիտակցության արդյունքներից մեկն է, ազգային պահանջմունքների բավարարման ձևերից մեկը՝ հոգևոր նվաճումների համախմբման մեջ:

Հայոց մատենադարանի և գրադարանի որոշ ֆունկցիաների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ օրինակ, Մատենադարանը չի

12 Գ. Հովսեփյան, Մատենադարանները ինչ հայոց մեջ (Պաշար, Բոստոն, 1946, էջ 7—14):

13 Ռ. Իշխանյան, Հայ մատենագիտության պատմություն, Երևան, 1964—1968, պրակ. Ա-Գ:

14 Մ. Հացունի, Հայկական մատենադարաններու պատմություն (Հանդես ամսօրյա, 1984, № 1—12, էջ 405—462):

15 Матенадаран, Армянская рукописная книга VI—XIV вв. (Составители и авторы текста В. О. Казарян, С. С. Манукян, т. I, М., 1991):

16 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 7:

17 К. Каланджиева, За място, ролята и задачите на националната библиотека. (Известия на народна библиотека «Кирил и Методий» и на библиотека на Софийския университет «Клемент Охридски», т. 4, София, 1965, с. 13):

սահմանափակվել լուկ ձեռագրերի, այլ նաև՝ տպագիր հրատարակությունների պահպանմամբ, դրանց գիտական ուսումնասիրմամբ և մատենագիտական սպասարկման գործունեությամբ: Այսպես՝ Հ. Շահիաթունյանցի կազմած և հետագայում Մ. Բրոսսեի ուսմանը և ֆրանսերեն լեզուններով թարգմանած և հրատարակած մատենագիտական ցանկը կազմում է 655 ձեռագիր և տպագիր գրքերի նկարագրություն<sup>18</sup>:

Իր գործունեության ընթացքում Երևանի ԱԳ-ն (նախկին հանրային) նույնպես չի սահմանափակվել միայն տպագիր գրականության, այդ թվում՝ պարբերական մամուլի ֆոնդավորմամբ ու սպասարկմամբ: Հիշենք, որ 1939—1959 թթ. ԱԳ-ի կազմում էր Մատենադարանի ձեռագիր ֆոնդը: Երկուսն էլ՝ ԱԳ-ն և Մատենադարանը սփյուռքի մյուս գրադարանների նկատմամբ կատարել և կատարում են համախմբող (գլխավոր) դեր՝ ձեռագիր և տպագիր գրականության ֆոնդավորման և սպասարկման ֆունկցիաները մեկը մյուսին փոխանցելով: Բայց եթե այսօր ազգային հոգևոր հարստության մի մասը՝ ձեռագիր ֆոնդը, կենտրոնացված է Մատենադարանում, իսկ տպագիրը՝ ԱԳ-ում, ապա պայմանականորեն կարելի է ընդունել, որ վերջինս կատարում է ազգային լիարժեք դեր:

ԱԳ-ի մասնակի դեր են կատարում նաև հայկական գաղթօջախների (Վենետիկի, Վիեննայի և այլն) Մատենադարանները, որոնց կարելի է համարել ԱԳ-ի ռեզիդենտ տեսակ, ինչպես նաև՝ ԳԱ հիմնական գրադարանը, իսկ Ապոլոն անվան հանրապետական մտնական գրադարանը և այլն:

Ընդհանրապես՝ գրադարանների կառուցվածքային փոփոխությունները առաջ են եկել դարակեսից և գտնվում են զարգացման ընթացքում<sup>19</sup>: Այդ զարգացումը դրսևորվում է համակողմանի, ինչպես նաև ռեզիդենտ տեսակների մեջ: Մի խոսքով, անկախ կոնկրետ պայմաններից, առանձին երկրներում, այդ թվում Հայաստանում և սփյուռքում, գրքային հարստության նպատակային վերաբաժանման, այդ միտումները դրսևորել են ինչպես ԱԳ-ի ֆոնդի կենտրոնացման, այնպես էլ ապակենտրոնացման մեջ: Այսպես՝ ԱԳ-ի ամբողջական տիպ ստեղծվեց 1958 թ. Զեխտսլովակիայում, որտեղ ԱԳ-ի կազմում մտան ազգային, համալսարանական, սլավոնական գրադարանները և գրադարանագիտության կենտրոնական գիտամեթոդական կաբինետը: Համանման ձևով 1972 թ. հիմնվեց Մեծ Բրիտանիայի ԱԳ-ն, որի կազմում էին Բրիտանական թանգարանի հրատարակությունների և արևելքի ժողովուրդների լեզուններով տպագիր գրքի և ձեռագրերի բաժինները, իսկ 1966-ին՝ բնական գիտությունների ֆոնդ, Ազգային տեղեկատու գրադարանը և Ազգային գիտատեխնիկական արձանագրություն գրադարանը:

ԱՄՆ-ում, պատմականորեն զարգացած ապակենտրոնացման պայմաններում, ԱԳ-ի մասնակի դեր էին կատարում 1956 և 1962 թթ. հիմնադրված Ազգային բժշկական և Ազգային գյուղատնտեսական գրադարանները:

Մակայն այդ և նմանատիպ այլ գրադարանները չպետք է շփոթել պաշտոնական անուն կրող ԱԳ-ի հետ, որոնք անցել են պատմական զարգացման որոշակի ուղի: Ինչու: Որովհետև գրանցից որևէ մեկի սոցիալական նշանակությունը կապված չէ լուկ մի ազգի, այլ՝ առանձին ազգությունների հետ, որոնք բնակվում են տվյալ երկրի (հանրապետության) աշխարհագրական տարածքում: Օրինակ, սխալ կլիներ կարծել, թե հայկական գրադարանների ու մատենադարանների գրադարանային-մատենագիտական սպասարկումը նպատակաուղղված է միայն հայազգի ընթերցողին: Հայաստանում ապրող էթնիկական փոքրամասնությունները, անկասկած, նույնպես օգտվում են

<sup>18</sup> Каталог книгм эчмпадзінской библиотеки, изданный М. Броссе, экстраординарным академиком, СПб., 1840.

<sup>19</sup> Ю. Н. Столяров, Библиотека: структурно-функциональный подход, М., 1981; Н. И. Тюлина, Национальная библиотека: опыт типологического анализа, М., 1988 и др.,

հալ ազգային մշակույթի այդ օջախներից, որովհետև Հայաստանում կա այլազգի ԱԳ:

Խոսելով ԱԳ-ի ֆունկցիաների մասին, համոզված պետք է ասել, որ հալ գրադարանագիտությունը և մատենագիտությունը, ինչպես հարկն է, չեն անդրադարձել այս հարցին:

1960-ական թվականներին անգլիացի գրադարանագետ Կ. Համֆրիզը համեմատական վերլուծություն անցկացնելով աշխարհի չորս խոշորագույն՝ Վ. Ի. Լենինի անվան ԽՍՀՄ պետական, Բրիտանական Թանգարանի, Ֆրանսիայի ազգային և ԱՄՆ-ի կոնգրեսի գրադարանների միջև, որ նա կատարել էր գրադարանային միությունների և հաստատությունների միջազգային ֆեդերացիայի հանձնարարությամբ, դրանց բոլոր ֆունկցիաները բաժանեց երեք խմբի. հիմնական, ցանկալի և ոչ պարտադիր<sup>20</sup>. Հիմնական ֆունկցիային նա վերագրեց հայրենական հրատարակությունների լրիվ հավաքածուների, ինչպես նաև՝ տպագիր հրատարակությունների պարտադիր օրինակների կոմպլեկտավորումը և պահպանումը, արտասահմանյան գրականության կոմպլեկտավորումը, ազգային հետադարձ մատենագիտության հրատարակումը, ֆոնդի գրացուցակների հրատարակումը, մատենագիտական ինֆորմացիայի սպասարկումը: Կ. Համֆրիզը ցանկալի ֆունկցիային վերագրեց ԱԳ-ի մասնակցությունը միջազգային գրադարանային աբոնեմենտին, ինչպես նաև՝ ձեռագրերի հավաքումը և գիտահետազոտական աշխատանքը, իսկ ոչ պարտադիրին՝ միջազգային և ներքին զրբափոխականություն կենտրոնացումը, մեթոդական օգնությունը երկրի գրադարաններին և այլն:

Հաշվի առնելով ՅՈՒՆԵՍԿՈ-ի 1970 թ. 16-րդ նստաշրջանում ձևակերպված դրույթները<sup>21</sup>, որոնք համարյա կրկնում էին Կ. Համֆրիզի ուսումնասիրության արդյունքները, Բրիտանական գրադարանի ղեկավարներից մեկը՝ Մ. Լայնը, 1980 թ. առաջարկեց ԱԳ-ի ֆունկցիաների հետևյալ աստիճանավորումը՝ հիմնական և լրացուցիչ: Հիմնական ֆունկցիաներ ասելով, նա նկատի ուներ ձեռագրերի հավաքում և ազգային լրատվության միջոցների կենտրոնացում (պարտադիր օրինակի բազայի վրա), արտասահմանյան հրատարակությունների հավաքում՝ աբոնեմենտի և պատճենահանման համար, միջգրադարանային աբոնեմենտի պլանավորում և կոորդինացում, ազգային ընթացիկ և հետադարձ մատենագիտությունների հրատարակում և այլն: Լրացուցիչ ֆունկցիաների տակ Մ. Լայնը հասկանում էր քարտարանների հրատարակում, ցուցահանդեսների կազմակերպում, գրադարանային գործի ուսումնասիրություն և մասնագետների որակավորման բարձրացում<sup>22</sup>:

Այսպիսով, ԱԳ-ին վերագրվող բազմախումբ ֆունկցիաներից ո՞րն է գլխավորը: Եվ ընդհանրապես, ի՞նչ է նշանակում «գլխավոր» ֆունկցիա, ինչո՞վ է այն որոշվում: Որքանո՞վ են համոզվել Կ. Համֆրիզի, Մ. Լայնի և ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից արված ֆունկցիաների գասակարպումը:

Ըստ Ն. Տյուլինայի, ԱԳ-ի սոցիալական նշանակությունը իրականացվում է հեռավոր ֆունկցիաներով. հիմնական, տիպաբանական և գաղափարական<sup>23</sup>: Սակայն, պարզվում է, որ չկա օբյեկտիվ չափանիշ՝ գրադարանի գլխավոր ֆունկցիան հայտնաբերելու համար: Հետազոտությունը ցույց է տալիս, որ գրադարանը, որպես հասարակական ինստիտուտ, կատարում է

<sup>20</sup> K. W. Humphreys, National libraries functions UNESCO bul. libr. 1966.— Vol. XX, № 4, P. 158—169, և ուրիշ: The role of the National library; a preliminary statement Libri, 1964, Vol. XIV, № 4, P. 356—368.

<sup>21</sup> Recommendation concerning the international Standardization of library statistics adopted by the General Conference at its sixteenth session. Paris, 13 November 1970. Paris; UNESCO. A. P. 8.

<sup>22</sup> M. B. Line, The role of national libraries; a reassessment Libri, 1980, Vol. XXX, № 1, P. 1—2.

<sup>23</sup> Н. И. Тюлина, *նշվ. աշխ.*, էջ 24—43:

տեսակային (այսինքն՝ սեռային) ֆունկցիա, որի հիմնական գործոններն են ֆոնդի կազմավորումը, մատենագիտական լրատվությունը և սպասարկումը: Դրանցից ցանկացածի բացակայությունը խոչընդոտում է ԱԳ-ի (որպես տեսակի) սոցիալական նշանակությանը և հետևաբար՝ անհնար դարձնում նրա գոյությունը: Համաձայն Ն. Տյուլինայի, ԱԳ-ի տիպաբանական ֆունկցիան երկու փոխներգործող ֆունկցիաների արդյունք է, որոնք ձևավորվել են բոլոր տիպի գրադարանների ինքնուրույն զարգացման ընթացքում: Կարևոր նշանակություն ունեն ֆոնդի կազմավորման ֆունկցիաները: Դրանք են՝ հայրենական և արտասահմանյան հրատարակությունների պարտադիր օրինակների կոմպլեկտավորումը, արխիվային ֆոնդը, էքստերիորիկան և ձեռագրերը (որից գուրկ է մեր ԱԳ-ն):

Մեր կարծիքով, հայալեզու ձեռագիր և տպագիր գրքային ֆոնդը ընթերցողին ավելի մատչելի դարձնելու նպատակով ճիշտ կլինի քարտարանային երկրկզվյան նկարագրություն անել (հայերեն և որևէ լեզվով):

Ելնելով վերը նշվածներից, հայկական ԱԳ-ի առաջին տիպաբանական ֆունկցիան կարելի է համարել հայրենական գրքային ֆոնդի հարստացումն ու ձևավորումը, երկրորդ՝ արտասահմանյան գրականության կոմպլեկտավորումը, երրորդ՝ մատենագիտական ինֆորմացիայի աղբյուրների հիմնումը համապետական սկզբունքի հիման վրա՝ ընդգրկած թեմատիկայով, չորրորդ՝ մատենագիտական ինֆորմացիայի և փաստաթղթերի սպասարկումը, հինգերորդ՝ մատենագիտական հիմնական ֆունկցիաների իրականացումը՝ պետական մասշտաբով (դրանց կենտրոնացման և կոորդինացման ճանապարհով), վեցերորդ՝ հանրապետության գրադարանների գործունեության հիմնական մեթոդական սկզբունքների մշակումը և ներդրումը, յոթերորդ՝ պետական մասշտաբով գրադարանային գործի գիտական մշակման իրականացումը և կազմակերպումը, ութերորդ՝ միջազգային գրադարանային աշխատանքների գործակցումը՝ համաշխարհային ծրագրերում:

Այսպիսով, ԱԳ-ի տիպաբանական ութ ֆունկցիաներից առաջին շորսը համարվում են սեռային (ներքին ծագման՝ համակարգային), մնացածները՝ տիպային (արտաքին համակարգային):

Ինչ վերաբերում է գաղափարական ֆունկցիային, ապա թե՛ ԱԳ-ն և թե՛ Ազգային Մատենադարանը պարտավոր են ապահովել հայ և օտարազգի ընթերցողների գաղափարական պահանջները՝ անկախ նրանց սոցիալական ծագումից և կուսակցականությունից: Այս ֆունկցիայի իրականացման գործում կարևոր է նշել տարբեր դարաշրջանների պատմաքաղաքական և անհրաժեշտ այլ գրականության ուսումնասիրումը և մասսայականացումը, թեմատիկ և հանձնարարական մատենագիտական ցանկերի հրատարակումը, ընթերցողների հետ տարվող ակտիվ աշխատանքը և այլ ուղիներ:

## НАЦИОНАЛЬНАЯ БИБЛИОТЕКА: ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ АНАЛИЗ

Г. А. СУКИАСЯН

### Резюме

В истории армянской культуры библиотеки сыграли и до сих пор играют важную общественную роль в развитии библиотечного дела, библиографии и науки. С помощью системно-исторического метода армянские библиотеки в Армении и за рубежом (в частности в Венеции и Вене) следует рассматривать в рамках одной системы. Такие крупные библиотеки, как фундаментальная библиотека АН и национальная библиотека Армении (НБА), Матенадаран им. Месропа Маштоца и дру-

гие, играют общегосударственное, а библиотеки (матенадараны) в армянской диаспоре—региональное значение.

Среди армянских библиотек НБА и Матенадаран выполняют лидирующую или координирующую роль. Это и есть их главная функция. Однако, с точки зрения библиографического обеспечения рукописных, печатных книг и других видов документов, их можно назвать национальными библиотеками с двойными функциями. Кроме того, НБА выполняет типологические и идеологические функции. Исходя из системного подхода, можно отметить восемь типологических функций, из которых четыре—внутрисистемного, остальные—внешнесистемного происхождения.